«ԵՐԵՎԱՆ ԼԵՌՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա – ՆԶՊ և ԱԿ

Մասնակից –Գևորգյան Հովհաննես

Ղեկավար – փոխգնդապետ Ա. Իսահակյան

Թեմա – Զինղեկների կողմից գործընկերների հետ փոխանկում մասնագիտական գործունեության բարձրացման նպատակով

Երևան 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

Զինղեկների կողմից գործընկերների հետ փորձի փոխանակում մասնագիտական գործունեության բարձրացման նպատակով 4

ԵԶՐԿԱՑՈՒԹՅՈՒՆ 13

ԳՐԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի կարևորությունը: Յուրաքանչյուր ուսուցիչ և զինղեկ պարտավոր է հիշել, որ իր մասնագիտական և գործնական արդյունավետությունից է կախված մեր ապագա սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակությունը և ռազմական գիտելիքների պաշարը: Մեր ապագան, մեր երկրի ապագան մեր ուսուցիչների և զինղեկների և մեր ձեռքում է:

Զինղեկների կողմից գործընկերների հետ փորձի փոխանակում մասնագիտական գործունեության բարձրացման նպատակով իրականացվում են աշխատակիցների պարբերաբար հանդիպումներ համայնքի բոլոր դպրոցների զինղեկների հետ, ինչը հետագայում հաստատեցին նաև իրենք՝ զինղեկները: Ամեն տարի օգոստոս ամսին զինկոմ, գնդապետ Ս. Սահակյանի անմիջական հսկողության ներքո կազմակերպվում են եռօրյա պարապմունքներ բոլոր զինղեկների մասնակցությամբ, շարային ստուգատես: Նաև ամեն ամիս տեղի են ունենում աշխատանքային հանդիպումներ, քննարկումներ զորամասերի հետ համագործակցողների փոխադարձ աշխատանքային պլանների շուրջ: Տարվա ընթացքում միջոցառումները պլանավորվում են համայնքի ավագ զինղեկ, լեյտենանտ Հարությունյանի հետ համատեղ: Լեյտենանտը մյուս զինղեկների հետ հանդիպումների մի մասը անցկացնում է հենց զինկոմիսարիատում, ընթացիկ աշխատանքների համար էլ նրան տարածք է հատկացվում զինկոմիսարիատի շենքում[1]:

Զինղեկների մասնագիտական որակավորումը բարձրանում է վերապատրաստումների ժամանակ, իսկ փորձի փոխանակումը իրականացվում է մեթոդմիավորումների հետ աշխատանքների մասնակցության ընթացքում:

Զինղեկների կողմից գործընկերների հետ փորձի փոխանակում մասնագիտական գործունեության բարձրացման նպատակով

Զինղեկների կողմից գործընկերների հետ փորձի փոխանակումը կատարվում է մեթոդմիավորումների հետ աշխատանքների արդյունքում: «Զինղեկի գործունեություն սկսելու, մասնագիտական զարգացման և կարիերային առաջընթացին» նպաստում է զինղեկի մասնագիտության միասնական համակարգի ներդրումը: Այն հիմնվում է զինղեկների մասնագիտական չափորոշչի վրա: Միավորում են և հստակեցվում այնպիսի թեմաներ, ինչպիսիք են՝

- ուսուցչի պատրաստումը մասնագիտության համար,
- գործունեություն սկսելու պայմանները և միջոցները,
- մասնագիտական զարգացման ուղիները և հնարավորությունները,
- ուսուցչի գործունեության գնահատումը և այս գնահատման վրա հիմնված
- կարիերային առաջընթացը: (այստեղ մեծատառերը կարելի է փոխել)

Ուսուցչի մասնագիտական զարգացման և գնահատման նոր համակարգի ներդրումը հնարավոր կդարձնի, որ ուսուցիչներն իմաստավորեն, թե որքանով արդյունավետ են օգտագործում իրենց գիտելիքը, կարողությունները և հմտությունները պրակտիկայում և ինչ պետք է արվի նրա համար, որ բարելավվեն աշակերտի արդյունքները: Դպրոցում ուսուցչի գործունեության գնահատման ճկուն համակարգի ներդրումը կնպաստի ուսումնական արդյունքների բարելավմանը և, միևնույն ժամանակ, այն կրթության որակի կառավարման պարտադիր նախապայմանն է: Կարևոր է, որ փորձի փոխանակման շրջանակներում, զինղեկի մասնագիտության հետ կապված, շատ և կարևոր գործառույթներ փոխանցված են դպրոցին, ինչը նրան օգնում է ձևավորվել որպես ինքնուրույն և սեփական զարգացման համար պատասխանատու ինստիտուտ:

Գոյություն ունեն տարբեր խմբակներ սոցցանցերում, ինչպես նաև կան տարբեր ծրագրեր, որտեղ գրանցվելով ուսուցիչները և զինղեկները կարող են փորձի փոխանակում կատարել և մասնագիտական գործունեությունը բարձրացնել:

Սակայն ամենաարդյունավետ փորձի փոխանակման և մասնագիտական բարձրացման միջոցը ուսուցչական վերապատրաստումներն են: Որտեղ հավաքվում

են տարբեր վայրերի ուսուցիչներն ու կատարվում է փորձի փոխանակում և որակավորման բարձրացում:

Փորձի փոխանակումը կատարվում է առաջատար ուսուցչի կողմից: Ի տարբերություն գործող և ավագ ուսուցչի, ավագ զինղեկը տարբեր մասշտաբի գործունեություններ է համակարգում: Նրա աշխատանքը պետք է դուրս գա դասասենյակի սահմաններից: Ավագ զինղեկը ինտենսիվ կերպով պետք է համագործակցի զինղեկների և այլ ներկայացուցիչների հետ: Նրա գործունեությունը հիմնականում պետք է միտված լինի փորձի փոխանակմանը:

Ավագ զինղեկը ցուցադրական դասի գլխավոր բնորոշ հատկանիշն այն է, որ այն պետք է ամենօրյա դասից տարբերվի և մեզ առաջարկի որևէ նորույթ, ոչ ստանդարտ, ստեղծագործական մոտեցում ուսանում-ուսուցման մեջ: Ցուցադրական դասը կարող է լինել նաև նախագիծ-դասը կամ ինտեգրված դասը:

Զինղեկի համար դպրոցի կարիքների հետազոտումը հիմնական գործունեությունն է: Կարևորն այն է, որ այս հետազոտումն անցկացվի բոլոր համապատասխան կանոնների պահպանմամբ: Զինղեկը բաց չպետք է թողնի հետազոտման որևէ փուլ: Մասնավորապես, առաջին փուլում նա պետք է ի հայտ բերի և ուսումնասիրի դպրոցում առկա հիմնախնդիրները, այնուհետև դրանց հիման վրա որոշի դպրոցի կարիքները և նախանշի ուղիներ այդ հիմնախնդիրների լուծման համար: Անցկացված հետազոտության վերջնական արդյունքը պետք է լինի հետազոտության զեկույցը: Հանրակրթական հաստատության կարիքների հետազոտման չափանիշները և նրա իրականացման համար անհրաժեշտ երաշխավորությունները ձեզ կներկայացնենք ուղեցույցի հաջորդ հրապարակման մեջ:

Փորձի փոխանակումը կարող է կատարվել նաև դպրոցի ներսում: Դասի դիտարկման ողջ գործընթացը այնպես, աշխատանքն ամբողջությամբ հիմնված է համագործակցության վրա: Մշտական հաղորդակցությունն աշխատակիցների միջև, իրար խորհրդատվությունը, նպատակաուղղված հոգածությունը միմյանց մասնագիտական զարգացման մասին, այս ամենը մեծապես նպաստում է դպրոցում աշխատակիցների միջև դրական, գործնական հարաբերությունների ձևավորմանը և

համագործակցային մշակույթի հաստատմանը, ինչն, ընդհանուր առմամբ, դպրոցի հաջողության գրավականն է[2]:

Գնահատման խմբի անդամները աշխատանքի ընթացքում, բնականաբար, իրենք ևս զարգանում են մասնագիտական առումով: Նրանք հնարավորություն ունեն հետևել իրենց գործընկերների աշխատանքին, զրուցել նրանց հետ և լսել նրանց տեսակետները, կարծիքները, ծանոթանալ նրանց փորձին, նաև աշխատել իրենց վրա՝ իրենց պարտականությունների ավելի լավ կատարման համար:

Փոխհամագործակցությունը և մասնագիտական քննարկումներն աշխատակիցների միջև բոլոր մասնակիցներին հնարավորություն են տալիս զարգանալ մասնագիտական առումով:

Բնականաբար, ավագ զինղեկը պետք է հոգ տանի ոչ միայն գործընկերների և դպրոցի մասնագիտական զարգացման, այլև ինքնակատարելագործման մասին: Ավագ զինղեկ լինելը դրա լավագույն հնարավորությունն է տալիս, քանի որ գործընկերների հետ համագործակցությունը երկկողմ շահավետ է: Փորձի փոխադարձ փոխանակման, տեսակետների և կարծիքների փոխանակման ճանապարհով գործընկերները սովորում են և աճում՝ որպես արհեստավարժներ:

Միևնույն ժամանակ, պլանավորված է ուսուցիչների մասնագիտական զարգացման ավագ զինղեկների համակարգային վերապատրաստում նրանց ընտրելուն պես նրանք կմասնակցեն վերապատրատումներին:

2017 ուսումնական տարվա ընթացքում նախնական զինվորական պատրաստության (ՆԶՊ) ուսուցումը արդյունավետ կազմակերպելու նպատակով օգոստոսի 24–30-ը Հանրապետության ուսումնական հաստատություններում հանրակրթական դպրոցների և միջին մասնագիտական դպրոցների ուսումնական հաստատությունների զինղեկների մասնակցությամբ անցկացվեցին եռօրյա ուսումնամեթոդական հավաքներ, որին մասնակցելու հրավերք են ունենում նաև տարածքների ուսումնական հաստատություններին կցված զորամասերի ներկայացուցիչներ և մարզպետարանների կրթության պատասխանատուներ:

Վերը նշված ծրագրի շրջանակներում Վարդենիսի տարաշածրջանի հանրակրթական դպրոցների զինղեկների, զորամասի ներկայացուցչի, ինչպես նաև

Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետի մասնակցությամբ 24-26-ուսումնամեթոդական պարապմունքներ անցկացվեցին զոհված Վարդենիս քաղաքի ազատամարտիկ Էդվարդ Պողոսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցում: Եռօրյա պարապմունքները մեկնարկեցին շարային ստուգատեսով: Դրան հաջորդեց նախորդ ուսումնական տարում դպրոցներում անցկացված ռազմահայրենասիրական միջոցառումների, նախնական զինվորական պատրաստության ուսուցման արդյունքների տարեվերջյան հաշվետվության ամփոփումը[3]:

Երեք օր շարունակ, օրական վեց ժամ, մասնակիցները ունկնդրեցին ՆԶՊ-ի դերին ու նշանակությանը, նոր ուսումնական տարում հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքներին, ավարտական դասարանների աշակերտների հետ անցկացվելիք երկօրյա դաշտային պարապմունքների պլանավորմանն ու կազմակերպանը, ՆԶՊ առարկայի դասավանդման մեթոդիկային նվիրված դասախոսություններ: Եռօրյա պարապմունքների ընթացքում քննարկվեցին ռազմագիտության լսարանների կահավորմանը, ՆԶՊ նյութատեխնիկական բազային, ուսումնական զենք-զինզմթերքի պահպանմանը, օգտագործմանը, ինչպես նաև շարային, տակտիկական, ֆիզիկական պատրաստության դասավանդման մեթոդիկային առնչվող, ՆԶՊ առարկայի հանրապետական օլիմպիադայի «ԿՈՐՅՈՒՆ» ռազմամարզական խաղերի կազմակերպմանը նվիրված և այլ առանցքային հարցեր: Պարապմունքների ավարտին տեղի ունեցավ միջառարկայական կապերի, առաջավոր փորձի փոխանակում և ուսումնամեթոդական պարապմունքների արդյունքների ամփոփումը:

Զինղեկների մասնագիտական գործունեության բարձրացման նպատակով իրականացվում են նաև մրցույթներ:

2014թ. «Լավագույն զինվորական ղեկավար» եւ «Լավագույն քաղպաշտպանության շտաբի պետ» մրցույթի Արարատի մարզային փուլում հաղթող են ճանաչվել Զրաշենի դպրոցի զինղեկ Արտակ Խաչատրյանը եւ Նոյակերտի դպրոցի զինղեկ Յուրիկ Հարությունյանը: Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրեց մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության

կրթության բաժնի առաջատար մասնագետ Սուրեն Շահինյանը, ըստ գործող համապատասխան կարգի, նրանց անունները ներկայացվել են ՀՀ ԿԳ նախարարություն:

Հունվարին անցկացվող ամենամյա «Աճող սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրները եւ դրանց լուծման ուղիները» թեմայով գիտական կոնֆերանսի ժամանակ կհայտարարվեն մրցույթի հանրապետական փուլի հաղթողների անունները: Կոնֆերանսին մշտապես մասնակցում են բոլոր մարզերի եւ մայրաքաղաքի դպրոցների զինղեկները: Քննարկվում են ռազմահայրենասիրական դաստիարակության, ինչպես նաեւ «Նախնական զինվորական պատրաստություն» առարկային վերաբերող հիմնախնդիրները, դրանց լուծումները, վեր են հանվում նախորդ տարվա հաջողությունները, իսկ լավագույնները տարբեր գերատեսչությունների կողմից արժանանում են գնահատանքի:

Զինղեկների կողմից գործընկերների հետ փորձի փոխանակումը և մասնագիտական գործունեության բարձրացման նպատակով դիտարկվում է զինղեկների վերապատրաստումը Հայաստանում մասնագիտական զարգացման հիմնական բաղադրիչ: Պետության կողմից իրականացվող պատասխանատու է կրթության նախարարության ենթակայության տակ գտնվող վերապատրաստման համար գործում է Կրթության ազգային ինստիտուտը, որն ունի մասնաճյուղեր ամբողջ Հայաստանում մարզերում:

Վերապատրաստման ծրագրերը նույնպես երկրորդ վարկային ծրագրի բաղադրիչներից էին: Այս ծրագիրն արդեն իրականացվել է ավագ դպրոցի զինղեկների համար սերտիֆիկացման անհրաժեշտ վերապատրաստում:

Վերջին տարիներին բազմաթիվ ուսուցիչների վերապատրաստման ծրագրեր են իրականացվել: Այնուամենայնիվ, նրանք հիմնականում կենտրոնանում են չափորոշիչների, դասավանդման մեթոդների և գնահատման թեմաների վրա: Այժմ կարևորվում է ժամանակակից ուսուցչի ամենակարեւոր հատկանիշներից մեկը դրանցից մեկը երեխաների մոտ սովորելու նկատմամբ հետաքրքրության զարգացումն է:

Ակնհայտ է՝ աշակերտների անտարբերությունը, պատասխանատվության պակասը, հետաքրքրության պակասը, որոնք հանգեցնում են անարդյունավետ հաղորդակցության, որն ազդում է կրթության որակի վրա: Հետազոտությունները ցույց են տալիս, որ դասարանում արդյունավետ հաղորդակցությունը, ինտերակտիվ կրթությունը, զինղեկների մասնագիտական գիտելիքների կատարելագործումը դրական ազդեցություն ունեցող մի քանի գործոններից են[3]:

Եթե ավելի վաղ՝ պետության նախաձեռնությամբ անցկացված բոլոր դասընթացներն անցկացվել են Կրթության ազգային ինստիտուտի կողմից, ապա այս ոլորտում փորձ ունեցող կազմակերպություններ՝ նոր կարգով հնարավորություն են ունեն դասընթացներ անցկացնել: Սակայն սա մի խնդիր է առաջացնում եթե այն ժամանակ կրթության ազգային ինստիտուտը ամեն ինչ կատարում էր պետության հաշվին: Ամեն ինչ նկատի ունենք ուսումնական կենտրոններ հասնելու տրանսպորտային ծախսերի և սննդի հետ կապված ծախսերի հոգալը: Այժմ այդ ամբողջը մնում է ուսուցչի ուսերին:

Մեծ խոչընդոտ է նաև այն, որ ուսուիչները չեն կարող ընտրել կենտոնները, որոնք իրենց տարածքին մոտ կլինեն: Այս դեպքում դպրոցներին ընտրության հնարավորություն չի տրվել:

Սա նաև ատեստավորման կարգի խախտում էր, քանի որ դպրոցները պետք է հնարավորություն ունենան ընտրել կազմակերպություն, որը վերապատրաստելու է ուսուցիչներին: Այդուհանդերձ, մի շարք կազմակերպությունների միջոցով վերապատրաստումներ անցկացնելը պարունակում է կոռուպցիոն ռիսկեր: Այն կազմակերպությունները, որոնք դպրոցների վրա ունեն ազդեցության լծակներ, կարողանում են ավելի շատ թվով ուսուցիչների ընդգրկել իրենց վերապատրաստման ծրագրում և ավելի շատ ֆինանսավորում ստանալ: Դպրոցները ոչ միշտ են ազատ վերապատրաստող կազմակերպություն ընտրելու հարցում:

Փորձագետները մտահոգություն են արտահայտում, որ ուսուցիչների ատեսատավորումը կրելու է ձևական բնույթ և չի նպաստելու ուսուցիչների մակարդակի բարձրացմանը:

Նախ խոսենք զինղեկներին ներկայացված մասնագիտական պահանջներից:

Պաշտոնական պարտականություններ՝

1) պլանավորում և իրականացնում է աշակերտների կրթությունն ու դաստիարակությունը հանրակրթական ոլորտում պետության չափորոշիչներին ու ծրագրերին և «Նախանական զինվորական պատրաստություն» (ՆԶՊ) առարկան, ստեղծում և ղեկավարում է ռազմական գործերն ուսումնասիրող շրջանակների աշխատանքը,

2) իրականացնում է ուսումնական հաստատության ղեկավարության եւ ուսուցչական կազմի հետ միասին աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակությունը, պլանավորում և իրականացնում է կուրսանտների վերապատրաստում և կրթություն հանրակրթության առարկայի պետական և ՆԶՊ չափորոշիչների և ծրագրերի համաձայն համապատասխան,

3) իրականացնել ուսումնական զենքերի, փոքր տրամաչափի հրացանների, պարկուճների հաշվառում և պահպանում դրանց համար «Զենքի մասին» ՀՀ օրենքի և այլ կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան,

4) ֆիզկուլտուրայի ուսուցչի հետ կազմակերպում է համատարած և քաղաքացիական պաշտպանություն ստանդարտների ներկայացում,

5) խրախուսել աշակերտներին մասնակցել հրաձգությանը, ռազմական սպորտին և քաղաքացիական պաշտպանությանը քաղաքային, մարզային, հանրապետական մրցույթներ, մարզական օրեր և այլ միջոցառումներ,

6) ղեկավարում է հանձնարարված զորամասերը, այլ ձեռնարկությունները, կազմակերպությունները համագործակցություն՝ նախնական զինվորական պատրաստվածության ուսուցման որակը բարելավելու նպատակով:

7) աջակցում է զինկոմիսարիատին ռազմաուսումնական հաստատություններ երիտասարդների ընդունելության հարցում պատրաստել, օգնում է դպրոցների տնօրեններին նախապատրաստել նախազորակոչային տարիքի երիտասարդներին փաստաթղթերը եւ ապահովում նախազորակոչային հաշվառումը, նրանց գրանցումը զինկոմիսարիատում,

8) համագործակցել ուսումնական հաստատության այլ ուսուցիչների, հոգեբանի, սովորողների ծնողների հետ (իրենց օրինական ներկայացուցիչների հետ) կազմակերպել աշակերտների և ընտանիքների կրթության հարցերում:

9) համագործակցում է գործընկերների հետ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության հարցում արդյունավետությունը բարելավելու համար,

10) մասնակցել մանկավարժական խորհրդի նիստերին,

11) սահմանված կարգով ստանում է զինվորական համազգեստ և կրում այն աշխատանքի ընթացքում:

Հանրակրթական հաստատության գիտելիքներին, հմտություններին և կարողություններին

Ընդհանուր պահանջներ՝

1) պետական ուսումնական հաստատության զինվորական ղեկավարի պաշտոն զբաղեցնող անձը պետք է իմանա հետեւյալը կարգավորող իրավական ակտերի դրույթները, որոնք վերաբերում են կրթության ոլորտին և կարգավորում աշխատանքի նկարագրության մեջ նշված լիազորությունները,

ա. «Լուսավորության մասին», «Հանրակրթության մասին», «Զինաթափման մասին», «Զենքի մասին», «Մանկական իրավունքների մասին», «Կրթության պետական տեսչության մասին», «Կրթության հատուկ պայմաններ կարիքավորների կրթության մասին», Հայաստանի Հանրապետության օրենքներ, Վարչական քրեական իրավախախտումների օրենսգիրք, «Հայաստանի Հանրապետության պետական հանրային կրթություն ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը,

բ. ՆԶՊ առարկայի ստանդարտի և ծրագրերի պահանջները՝ կապված նրա աշխատանքային պարտականությունների հետ նախարարության համապատասխան նորմատիվ ակտեր, այլ իրավական փաստաթղթերի մեջ մանկավարժական տեսության և մեթոդիկայի հիմունքներ, հոգեբանություն, առաջին բուժօգնություն,

ե) աշակերտների աշխատանքի, կյանքի և առողջության անվտանգության կանոնների ապահովում:

Որակավորման պահանջները՝

1)հանրակրթական ուսումնական հաստատության զինղեկի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն, սպայական կոչում:

Այսպիսով զինղեկի կողմից գործընկերների հետ համագործակցությունը կատարվում է՝ դպրոցից դուրս և դպրոցի ներսում, վերապատրաստումներում, համացանցի ներսում և առցանց: Այն զինղեկը ով շահագրգռված է կատարելագործել, թե իր գիտելիքները, թե իր մասնագիտական գրոծունեության արդյունավետությունը ապա նա կգտնի ճանապարհը[4]:

ԵԶՐԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարված հետազոտությունների և դիտարկումների արդյունքների ամփոփմամբ կարելի է հստակեցնել մի քանի եզրակացություններ, որոնք արտահայտում են ուսումնասիրության առանցքային դրույթներն ու հիմնական եզրակացությունները:

- Ուսուցչի մասնագիտական զարգացման և գնահատման նոր համակարգի ներդրումը հնարավոր կդարձնի, որ ուսուցիչներն իմաստավորեն, թե որքանով արդյունավետ են օգտագործում իրենց գիտելիքը, կարողությունները և հմտությունները պրակտիկայում և ինչ պետք է արվի նրա համար, որ բարելավվեն աշակերտի արդյունքները:
- Գոյություն ունեն տարբեր խմբակներ սոցցանցերում, ինչպես նաև կան տարբեր ծրագրեր, որտեղ գրանցվելով ուսուցիչները և զինղեկները կարող են փորձի փոխանակում կատարել և մասնագիտական գործունեությունը բարձրացնել:
- Սակայն ամենաարդյունավետ փորձի փոխանակման և մասնագիտական բարձրացման միջոցը ուսուցչական վերապատրստումներն են: Որտեղ հավաքվում են տարբեր վայրերի ուսուցիչներն ու կատարվում է փորձի փոխանակում և որակավորման բարձրացում:
- Փորձի փոխանակումը կատարվում է առաջատար ուսուցչի կողմից: Ի տարբերություն գործող և ավագ ուսուցչի, ավագ զինղեկը տարբեր մասշտաբի գործունեություններ է համակարգում: Նրա աշխատանքը պետք է դուրս գա դասասենյակի սահմաններից: Ավագ զինղեկը ինտենսիվ կերպով պետք է համագործակցի զինղեկների և այլ ներկայացուցիչների հետ: Նրա գործունեությունը հիմնականում պետք է միտված լինի փորձի փոխանակմանը:
- Զինղեկների կողմից գործընկերների հետ փորձի փոխանակումը և մասնագիտական գործունեության բարձրացման նպատակով դիտարկվում է զինղեկների վերապատրաստումը Հայաստանում մասնագիտական զարգացման հիմնական բաղադրիչ: Պետության

կողմից իրականացվող պատասխանատու է կրթության նախարարության ենթակայության տակ գտնվող վերապատրաստման համար գործում է Կրթության ազգային ինստիտուտը, որն ունի մասնաճյուղեր ամբողջ Հայաստանում մարզերում:

- Այսպիսով զինղեկի կողմից գործընկերների հետ համագործակցությունը կատարվում է՝ դպրոցից դուրս և դպրոցի ներսում, վերապատրաստումներում, համացանցի ներսում և առցանց: Այն զինղեկը ով շահագրգռված է կատարելագործել, թե իր գիտելիքները, թե իր մասնագիտական գրոծունեության արդյունավետությունը ապա նա կգտնի ճանապարհը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Արսեն Աղեկյան, «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ». ԽՆԴԻՐՆԵՐ, ՍՊԱՍՈՒՄՆԵՐ, ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, 03.07.2014-09.07.2014թ., Հայ զինվոր ՀՀ պաշտպանության նախարարության հանդես, http://www.hayzinvor.am/27029.html
2. Կարինե Թորոսյան, Կարինե Չիբուխչյան, Մարինե Մանուկյան «Մեթոդական աշխատանքները դպրոցում», 2014թ. 192 էջ:
3. П. М.Брысин «Проведение занятий по Начальной военной подготовке», М.П.Калинин «Высшая школа», 1990г.
4. Подоляк Я.В. Личность и коллектив: психология военного управления. — М.: Воениздат, 1989.